# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍՏ-23/3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 24 | Կիտել տոնական երկկոճկուն (երկփեղկ) Արդարադատության երրորդ դասի խորհրդականից մինչև արդարադատության առաջին դասի խորհրդականի համար ` բաց մոխրագույն 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 խտությամբ կտորից, մարմինը կիսագրկող մակերեսով, հետ ծալած օձիքով, օձիքի եզրերը մշակված են 342 գր/մ2 խտությամբ մահուդե կարմիր եզրագծով, օձիքի վրա ոսկեգույն թելով ասեղնագործվում է Հակակոռուպցիոն Կոմիտեում ծառայողի համար նախատեսված եզրազարդի խորհրդանշանը (Ձև 3, Նկար 3): Կիտելի 2 փեշերի վրա ուղղանկյուն կափույրով ներկարված գրպաններ են: Թևքերը երկկարանի են, թիկունքն ամբողջական է` երկու կողային բացվածքով: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև Հակակոռուպցիոն Կոմիտեի ջակարդե թևքանշանն է (Ձև 6, Նկար 3): Աստառը` մոխրագույն մետաքսե, ծոցագրպանով: Կիտելը երկկոճկուն (երկփեղկ) 6 ոսկեգույն 22մմ տրամագծով հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը ոսկեգույնով երիզված կոճակներով է, որոնք տեղադրված են երկշարք (Ձև 9, Նկար 2): Համաձայն` ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Տաբատ տոնական` մուգ կապույտ 67% բուրդ, 33% Պ/Է 317գր/մ2 խտությամբ կտորից, ուրվագիծը` ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 342 գր/մ2 խտությամբ մահուդե 1 եզրագիծ` 1.5-ից 2 մմ լայնությամբ: Գոտին` կամրջակներով: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, հետնամասի աջ կողմում` կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասը` մինչև ծնկները մետաքսյա աստառով (Ձև 9, Նկար 1, 2): Համաձայն` ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵՍՏ-23/3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 24 | |